ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2024թ. № 963

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական ղեկավար Թամարա Մինասյանը 2024 թվականի սեպտեմբերի 17-ին Սպիտակ համայնքի ղեկավարին ներկայացրել է վարչական բողոք՝ խնդրելով անվավեր ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 152 կարգադրությունը:

Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 152 կարգադրությամբ Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական ղեկավար Թամարա Մինասյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ կարգապահական տույժը վարչական կարգով բողոքարկելու իրավական հնարավորություն առկա չէ, ուստի Թամարա Մինասյանը իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժը վարչական կարգով բողոքարկելու իրավունք չունի:

«Վարչարարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի անհրաժեշտ նախապայմաններ են հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու և արտաքին ներգործություն ունենալու հանգամանքը:

Տվյալ պարագայում Սպիտակ համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 152 կարգադրությունն ընդունող մարմինը թեև հանրային իրավունքի սուբյեկտ է, սակայն ընդունված իրավական ակտը մասնավոր՝ աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակներում է ընդունվել և արտաքին ներգործություն չունի, քանի որ դրա ներգործությունը տարածվում է այն ընդունող մարմնին ենթակա աշխատողի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի վարչական ղեկավար Թամարա Մինասյանի 2024 թվականի սեպտեմբերի 17-ի վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» հոկտեմբերի 2024թ. № 964

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքապետարանի կողմից հայտարարված՝ «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/34» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի հաղթող ճանաչված մասնակիցը՝ «ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-ն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումը, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի N 4 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/34» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել է չկայացած և հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. «ԻՄՓՐՈՒՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 4
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 04 » հոկտեմբերի 2024թ. № 965

«ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐ» ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.1-ին հոդվածով, հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժնի պետ Մելանյա Դանիելյանի զեկուցագիրը, «Ուսուցչի օր» տոնի առիթով շնորհավորական բացիկներ, տորթեր և շոկոլադե կոնֆետների հավաքածու ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի՝

1) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 27 600 ՀՀ դրամ՝ դեկորատիվ կամարների, եղնիկների և կառքերի ձևավորման պարագաներ ձեռք բերելու համար.

2) «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 409 280 ՀՀ դրամ՝ աշխատանքներն իրականացնելու նպատակով ծառայություն ձեռք բերելու համար.

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» հոկտեմբերի 2024թ. № 966

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-046-0220-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,34975 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, 25-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Լոռի-4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25072024-06-0058 վկայականը և Էդգար Վիլիսոնի Սիմոնյանի (ծնված՝ 06.12.1985 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Լուսաղբյուր 8 հողամաս» հասցեում գտնվող, 06-046-0220-0020 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության 0,34975 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» հոկտեմբերի 2024թ. № 967

«ՋՈՒԼԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԺՈՐԺԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 111-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի, հիմք ընդունելով «ՋՈՒԼԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԺՈՐԺԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2024 թվականի հոկտեմբերի 2-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՋՈՒԼԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ ԺՈՐԺԻԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը (ՀՎՀՀ 66978711) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Արևաշող 1-ին փողոց 5-րդ փակուղի 5» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 48 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի 4-րդ եռամսյակի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 7
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» հոկտեմբերի 2024թ. № 968

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-046-0220-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման թիվ 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, 25-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Լոռի-4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10112023-06-0024 վկայականը և Նշան Գագիկի Ուստյանի (ծնված՝ 25.12.1991 թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Լուսաղբյուր 9-րդ փողոց 31 հողամաս» հասցեում գտնվող, 06-046-0220-0012 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության 0,5 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե. Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» հոկտեմբերի 2024թ. № 969

06-097-0032-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,12219 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 33-րդ և 50-րդ կետերով հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող բնակելի տան նկատմամբ թիվ ԼԴ4/0391/02/15 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի վճռով ճանաչվել է Գրիշա Սոսի Բաղրամյանի սեփականության իրավունքը, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-097-0032-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12219 հեկտար մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով թիվ ԼԴ4/0391/02/15 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ–ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի հասցեավորման հայտը (քաղվածք՝ 06192YEHMDDE) և Գրիշա Սոսի Բաղրամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և ճանաչել Գրիշա Սոսի Բաղրամյանի (ծնված՝ 24.02.1958թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում գտնվող 06-097-0032-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12219 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հաստատել անշարժ գույքի հատակագիծը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ համայնք, Սարահարթ, 2-րդ փողոց, 3-րդ փակուղի, 7 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 7
ք.Սպիտակ